ԱԼԵՔՍԵՅ ՋԻՎԵԼԵԳՈՎ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Ա. Ն. ՏԱՅԱՆ

Ալեքսեյ Կարպովիչ Ջիվելեգովը (Ալեքսանդր Կարապետի Ջիվելեգյան, 1875—1952) մշակույթի ականավոր գործիչներից մեկն էր միութենական չափանիշով։ Ջիվելեգովի անունը հայտնի էր դեռ հեղափոխությունից առաջ և ավելի հայտնի դարձավ հեղափոխությունից հետո, երբ գիտական կադրերը այնքան կարևոր էին սովետական նոր կուլտուրա դարբնելու համար։ Հեղափոխության առաջին իսկ օրերից, երբ արդեն թևակոխել էր իր կյանքի 40 տարին, նա իր դիտելիքները և ուժերն ի սպաս դրեց նոր ժամանակների պահանջներին, ծավալելով գիտական, կազմակերպչական և մանկավարժական բեղուն գործունեություն։

Ջիվելեգովը միջնակարգ կրթությունն ստացել է իր ծննդավայրում, Նոր Նախիջևանի հայ թեմական դպրոցում, հայտնի մանկավարժ և բանաստեղծ Երվանդ Շահազիզի տեսչության օրոք։ 1893 թ. ավարտելով թեմական դպրոցը, ընդունվում է Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը։ Այստեղ աշակերտելով ռուս նշանավոր պատմաբան Պ. Գ. Վինոգրադովին, մասնագիտանում է ընդհանուր պատմության մեջ։ 1897 թ. փայլուն կերպով ավարտելով Մոսկվայի համալսարանը, Ջիվելեգովը առաջարկություն է ստանում մնալու համալսարանում պրոֆեսորական ատենանի պատրաստվելու համար, սակայն ժամանակի լուսավորության մինիստրը մերժում է այդ առաջարկը՝ Ջիվելեգովի «ոչ ռուսական» ծագման պատճառով։ Բայց այն, ինչ մերժվեց ցարական Ռուսաստանում, հետագայում ճանաչվեց սովետական Ռուսաստանում, ուր Ջիվելեգովը դարձավ ոչ միայն Մոսկվայի համալսարանի, այլև բարձրագույն ուսումնական ուրիշ հաստատությունների բազմամյա և բազմերախտ դասախոս-պրոֆեսորը։

Ջիվելեգովն իր գիտական զբաղումներն սկսեց Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին, երբ գրեց իր առաջին գիտական հոդվածը «Вико и его система философии» *խորագրով*[1]։

Ջիվելեգովի գիտական բուն գործունեությունն սկսվեց մեր դարի սկզբին և տևեց հիսուն տարի, այսինքն մինչև իր կյանքի վերջը։ Կես դարի ընթացքում մեծ գիտնականը գրեց և հրատարակեց պատմական, գրականագիտական և արվեստաբանական երկու տասնյակ աշխատություններ և բազմաթիվ հոդվածներ[2]։

---

1 *Տե՛ս* «Вопросы философии и истории», М., 1896.

2 *Դրանց ընդհանուր ցուցակը տե՛ս* «Сообщения Института истории искусств АН СССР», 1957, № 10—11.

Ջիվելեգովի գիտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջանի, որոնց բաժանարար սահմանագիծը կազմեցին 1930-ական թթ.։ Մինչև այդ Ջիվելեգովն իր ուշադրությունը գլխավորապես նվիրել էր Արևմտյան Եվրոպայի պատմության և միջնադարյան հասարակական կյանքի ուսումնասիրությանը, իսկ 30-ական թթ. հետո ականավոր գիտնականն իր հետազոտության հիմնական առարկան դարձրեց Եվրոպական և հատկապես իտալական Վերածնունդի մշակույթը։



Իր գիտական գործունեության այդ երկրորդ շրջանում նա հրատարակեց մի շարք արժեքավոր աշխատություններ։ Հատկապես կարևոր էին «Жизнь замечательных людей» մատենաշարով լույս ընծայված մենագրությունները՝ նվիրված իտալական Վերածնունդի երեք մեծ դեմքերին (Դանտե, Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո) և մի աշխատություն՝ նվիրված իտալական ժողովրդական թատրոնին։ Այս երկերի (մանավանդ վերջին երեքի) վերահրատարակությունները պերճախոս կերպով վկայում էին ականավոր իտալագետի գործերի մնայուն արժեքը։ Իբրև իտալական Վերածնունդի գրականության և արվեստի հանրաճանաչ մասնագետ Ջիվելեգովը 1930—1940 թթ. բազմաթիվ հոդվածներ էր տպագրել սովետական հանրագիտարաններում, ՍՍՀՄ ԳԱ հանդեսներում և գրական մամուլում կամ ներածական հոդվածներ էր գրել իտալական Վերածնունդի հեղինակների ռուսական հրատարակությունների համար։ Գիտության մեջ կարևոր ներդրում էին անգլիական և ֆրանսիական Վերածնունդի գրականության նվիրված գլուխները, որ Ջիվելեգովը գրել էր բազմահատոր կոլեկտիվ աշխատությունների համար և Գ. Բոյաջիևի հեղինակակցությամբ մի աշխատություն՝ նվիրված արևմտաեվրոպական թատրոնի պատմությանը։ Այս բոլորից բացի Ջիվելեգովն ունի բարձրարժեք թարգմանություններ Վագարիի, Մարիավելլիի, Լեոնարդո դա Վինչիի և Գոլդոնիի երկերից։

Ջիվելեգովի գիտական աշխատանքը զուգորդված էր կազմակերպչական և մանկավարժական բուռն գործունեության հետ, որը նույնպես հանրածանոթ էր դեռ Հեղափոխությունից առաջ։ 1898 թ. երիտասարդ գիտնականը Մոսկվայում հրավիրվել էր աշխատակցելու Գրանատի մեծ հանրագիտարանին, ըստ կրգրում՝ իբրև պատասխանատու քարտուղար և ապա՝ իբրև հրատարակչության վարչության նախագահ։ 1914 թ., երբ դեռ Գրանատի պատասխանատու քարտուղարն էր, նա Լենինին գրավոր առաջարկություն է անում հոդված գրելու Մարքսի մասին այդ հանրագիտարանի համար։ Լենինը ընդունում է «մեծարգո

[3] «История английской литературы», т. I, М.—Л., 1943; «История французской литературы», т. I, М.—Л., 1946; А. Дживелегов и Г. Бояджиев, История западно-европейского театра от возникновения до 1789 г., М.—Л., 1941.

կոլլեգայի» առաջարկը, գրելով ընդարձակ մի հոդված, որը տպագրվում է Գրանատի հանրագիտարանի 1915 թ. հատորում, «Կարլ Մարքս» խորագրով։ Ջիվելեգովը Գրանատի հանրագիտարանին աշխատակցեց մինչև 1939 թ.։ Այդ տարիների ընթացքում նա, բացի վարչական-խմբագրական աշխատանքից, հանրագիտարանի համար գրել է 50-ի չափ ծավալուն և մի քանի հարյուր մանր հոդվածներ։

Ջիվելեգովի գիտական և կազմակերպական գործունեությունը ծավալվում է հատկապես «Academia» հրատարակչությունում, Մաքսիմ Գորկու ղեկավարությամբ և համագործակցությամբ։ Գորկին, որի հետ Ջիվելեգովը նախապես էլ կապված էր նամակագրական կապերով, բարձր էր գնահատում գիտնականի էրուդիցիան իտալական դասական գրականության ասպարեզում։ Ջիվելեգովը վարում էր «Academia»-ի իտալական հրատարակությունների բաժինը դեռ նախքան Գորկու վերադարձը Կապրիից (Իտալիա)։ Գորկու և Ջիվելեգովի նամակագրության և համագործակցության տարիներին (1931—1935) և այնուհետև մինչև 1939 թ. ռուսերեն թարգմանություններով և Ջիվելեգովի ներածական հոդվածներով «Academia»-ի հրատարակությամբ լույս տեսան իտալական դասական գրականության նշանավոր հեղինակների (Դանտե, Բոկաչչո, Արիոստո, Տասսո, Մաքիավելլի, Կամպանելլա, Չելլինի, Գուիչչարդինի, Լեոնարդո դա Վինչի, Պոլիցիանո, Ֆիրենցուոլա, Մազուչչո, Կարդանո, Վիկո, Գոլդոնի, Գուերացցի, դ՝ Անելիո) գործերը։ Գորկու հետ նամակագրական կապերի և «Academia» հրատարակչությունում համատեղ աշխատանքի մասին Ջիվելեգովը պատմել է իր «Горький и итальянская литература» հոդվածում[4]։

1939 թ. Ջիվելեգովը վարել է արևմտաեվրոպական գրականության բաժինը Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտում, իսկ 1945—1949 թթ.՝ թատրոնի պատմության մասնաճյուղը Մոսկվայի արվեստի պատմության ինստիտուտում։ Միաժամանակ անվանի գիտնականը գործուն մասնակցություն է ունեցել Հայաստանի ակադեմիայի աշխատանքներին, 1945 թ. ընտրվելով հայրենի ակադեմիայի թղթակից-անդամ։

Ջիվելեգովի մանկավարժական գործունեությունը նույնպես սկիզբ է առնում վաղ անցյալից։ Երիտասարդ գիտնականը դեռ հեղափոխությունից առաջ հրավիրվել էր դասախոսելու Մոսկվայի և Նիժնի Նովգորոդի ժողովրդական համալսարաններում։ Հեղափոխությունից հետո լայն ծավալ ստացան արդեն ճանաչված գիտնականի մանկավարժական և դասախոսական աշխատանքները։ Սովետական իշխանության առաջին օրերից սկսած պրոֆեսոր Ջիվելեգովը, գիտական և կազմակերպչական աշխատանքներին զուգընթաց, դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում, Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտում, Լունաչարսկու անվան թատերական արվեստի պետական ինստիտուտում և Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտում։ 1945—1946 թթ. նա հրավիրվել է նաև Երևան՝ դասախոսություններ կարդալու պետական համալսարանում և թատերական ինստիտուտում։

---

[4] «Книжные новости», 1937, № 11.

Ջիվելեգովի հեղինակությունը ճանաչել և գիտական գործունեությունը գնահատել են Լենինն ու Գորկին, Լունաչարսկին և Մյասնիկյանը:

Անշուշտ այսօր կարևորն ու մնայունը Ջիվելեգովի թողած գիտական մեծ ժառանգությունն է, պատկառելի ոչ միայն ծավալով, այլև արժեքով: Նրա աշխատությունները կարելի է բաժանել երկու հիմնական ճյուղերի՝ եվրոպական պատմությունը և եվրոպական մշակույթը, մասնավորապես իտալական Վերածնունդի մշակույթը: Եթե նախասովետական շրջանում և սովետական շրջանի առաջին տասնամյակներում Ջիվելեգովը գլխավորապես նվիրվել էր եվրոպական երկրների պատմական և հասարակական երևույթների հետազոտությանը և համեմատաբար քիչ էր զբաղվել իտալական Վերածնունդի մշակույթով, ապա հաջորդ տասնամյակներում ականավոր գիտնականը թեքվեց դեպի գեղագիտական ուսումնասիրությունները և ամենից առաջ ու ամենից ավելի՝ այն փառահեղ շրջանը, որը մշակույթի պատմության մեջ կոչվում է իտալական Վերածնունդ: Այսպիսով զուտ պատմաբանը դարձավ մշակույթի պատմաբան, մշակույթի կարևոր շրջանների վերլուծող: Մի խոսքով, Ջիվելեգովը, որ մասնագիտությամբ պատմաբան էր, դարձավ գեղագետ, որին կոչված էր իր խառնվածքով ու նախասիրությամբ: Իզուր չէ, որ Ջիվելեգովի մերձավորները կատակով նրան անվանում են «человек Ренессанса»:

Եթե նկատի ունենանք, որ նախասովետական շրջանում և սովետական շրջանի սկզբնական տարիներին Ջիվելեգովի գրած պատմական աշխատությունները այսօր զուցե չունեն այն արժեքը, ինչ որ ունեին իր ժամանակին, եթե նկատի ունենանք, որ հետագայում, սկսած 1940-ական թթ., Ջիվելեգովը անգլիական և ֆրանսիական մշակույթի պատմությամբ զբաղվել է ոչ սիստեմատիկ, այլ առիթից-առիթ, ապա դժվար չէ կռահել, որ նրա գիտական գործունեության ամենալայն, ամենատևական ասպարեզը դարձել էր իտալական մշակույթը, սկսած «իտալական գեղագիտության հայր» և նշանավոր փիլիսոփա Ջան Բատտիստա Վիկոյին նվիրված իր առաջին ուսումնասիրական հոդվածից (1896) մինչև իտալացի նշանավոր արվեստագետ-դերասան Թոմազո Սալվինիին նվիրված հոդվածը, որ տպագրվեց հետմահու (1957):

Այսպիսով, Ջիվելեգովի ուսումնասիրության հիմնական առարկան եղել է իտալական մշակույթը (գրականությունը, արվեստը և թատրոնը), իսկ նրա ուսումնասիրության առարկայի առանցքը կազմել է իտալական Վերածնունդը՝ իր բազում արտահայտություններով և մեծություններով, սկսած իտալական Վերածնունդի նախակարապետ Դանտեից մինչև XVI—XVII դդ. իտալական ժողովրդական թատրոնը (Commedia dell'arte): Նույնիսկ երբ Ջիվելեգովը գրում էր եվրոպական մի այլ ժողովրդի Վերածնունդի մեծ հեղինակի մասին, չէր կարողանում կտրվել իտալական միջավայրից. դրա վկայությունն է «Шекспир и Италия» խորագրով իր ծավալուն և արժեքավոր ուսումնասիրական հոդվածը, որ նա տպագրել է Մաքսիմ Գորկու հիմնած հանդեսում[5]: Իզուր չէ, որ Ջիվելեգովը հռչակվեց որպես իտալական Վերածնունդի մշակույթի ամենահեղինակավոր մասնագետը և իզուր չէ, որ ականավոր դիտնականի փայլուն աշխատությունները՝ նվիրված Միքելանջելոյին, Լեո-

5 Տե՛ս «Литературная учеба», М., 1938, № 12.

նարդո դա Վինչիին և Commedia dell'arte-ին պահպանել են իրենց պատմական ու վերլուծական բարձր արժերը և վերահրատարակվում են մինչև այսօր։

Ջինվորագրվելով դեղագիտությանը, մեծանուն գիտնականը չդասալքեց պատմությունը. նա այն դարձրեց ոչ թե հատուկ հետազոտության առարկա, այլ դեղագիտության լծակից։ Այստեղից էլ՝ ականավոր գիտնականի դեղագիտական ուսումնասիրությունների հագեցածությունը պատմականությամբ, պատմական միջավայրով, պատմական շրջանի առանձնահատկություններով. այստեղից էլ՝ իր ուսումնասիրությունների մեջ այս կամ այն արվեստագետի կամ դրողի այնքան կենդանի, այնքան բաբախուն, այնքան հմայիչ պատկերը՝ ներկայացված պատմական շրջագծի մեջ։ Նշանավոր գիտնականի գեղագիտական ուսումնասիրությունները թրծված են պատմական տվյալների շաղախով։

Ջիվելեգովի ծավալուն գիտական գործունեությունը թերի կլիներ, եթե չնշեինք նաև այն թելերը, որոնք ականավոր գիտնականին կապում էին հայ ժողովրդի պատմության և մշակույթի հետ։ Դրանք հյուսված էին վաղուց, երբ Ջիվելեգովը դեռ սովորում էր Նոր Նախիջևանի թեմական դպրոցում։ Այդ թելերը հետագայում այնքան ամրացան, որ չէին կարող աննշմարելի մնալ նրա գործունեության մեջ։ Նա ընդամենը 25 տարեկան էր և դեռ նոր էր մուտք գործել գիտության բնագավառը, երբ պատմաբանի իր առաջին պարտականություններից մեկը համարեց զբաղվել իրեն ծնող ժողովրդի պատմական ճակատագրով։ Այնուհետև ամեն անգամ, երբ Հայկական հարցը հուզում էր առաջացնում ռուս հասարակական առաջավոր խավերի մեջ, Ջիվելեգովը առաջիններից մեկն էր, որ իր ձայնն էր բարձացնում հօգուտ իր ժողովրդի դատի արդարացի լուծման։ Երիտասարդ գիտնականը 1900 թ. նոյեմբերի 26-ին Պետերբուրգում հրապարակային դասախոսության կարդաց ռուսահայ հասարակական գործիչ Գ. Ա. Ջանշիևի հիշատակին նվիրված երեկոյին[6]։ Ջիվելեգովի այդ դասախոսությունը Հայկական հարցի ամփոփ պատմությունն էր 1895—1896 թթ. Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայկական կոտորածների առնչությամբ, որոնք այնքան հուզել էին ռուս հասարակական միտքը և որոնց առիթով այնքան հայանպաստ գործունեություն էր ծավալել Գ. Ջանշիևը։ Ջիվելեգովը հայրենասիրական եռանդուն գործունեություն ծավալեց նաև համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, երբ «Русские ведомости», «Армянский вестник» և այլ հանդեսներում տպագրված իր հոդվածներով ռուս հասարակական միտքը հրավիրեց հայկական կոտորածների վրա։ Իր այդ հոդվածներում Ջիվելեգովը հայ ժողովրդի փրկությունը գտնում էր միայն Ռուսաստանի միջոցով և ռուսական հովանավորությամբ։ Համաշխարհային երկրորդ պատերազմից անմիջապես հետո, 1946 թ. փետրվարի 20-ին Ջիվելեգովը Մոսկվայում կարդաց մի հրապարակային դասախոսություն՝ «Армения и Турция» թեմայով, որը որպես բրոշյուր նույն թվականին տպագրվեց «Правда»-ի հրատարակչությամբ և շատ մեծ տպաքանակով։

Ջիվելեգովը հետաքրքրվել է ոչ միայն հայ ժողովրդի պատմությամբ, այլև հայ մշակույթով։ Դեռ պատերազմից առաջ, 1939 թ., իբրև պատվավոր

---

6 «Г. А. Джаншиев и Армянский вопрос» (տե՛ս «Русская мысль», М., 1901, кн. 2).

հյուր, նա Մոսկվայից հրավիրվել էր Երևան մասնակցելու «Սասունցի Դավիթ» էպոսի հաղարամյակի տոնակատարություններին։ Հետպատերազմյան տարիներին Ջիվելեգովը մոսկովյան մամուլում ուշագրավ հոդվածներ է տպագրել Աբովյանի, Թումանյանի և Իսահակյանի մասին։ Արժեքավոր առաջաբաններ է գրել Ռ. Ռոլանի՝ հայ թատրոնի 2000-ամյակին նվիրված աշխատության և Դանտեի հռչակավոր երկի հայերեն թարգմանության համար։ Ջիվելեգովի հետպատերազմյան այցելությունները Սովետական Հայաստան առավել ևս ամրապնդեցին ականավոր գիտնականի հոգևոր կապերն իր ժողովրդի հետ։ Հայաստան կատարած այցելությունների ժամանակ, խանդավառվելով իր ժողովրդի պատմական հուշարձաններով և ներկա նվաճումներով, նա ցանկություն էր հայտնել կյանքի վերջին տարիներին ապրել Հայաստանում[7]։ Բայց վերահաս մահը խափանեց մեծանուն գիտնականի այդ ծրագիրը։

Մեկ թվում է ժամանակն է նախապատրաստել Ալեքսեյ Ջիվելեգովի ընտիր երկերի հայերեն հրատարակություններ, հատկապես այն երկերի, որոնք Մոսկվայում արժանացան հետմահու վերահրատարակության («Леонардо да Винчи», «Микеланджело», «Итальянская народная комедия. Commedia dell'arte»), ինչպես նաև իր բարեփոխած և ընդլայնած «Данте, Жизнь и творчество» մենագրությունը, որը ի պատիվ հեղինակի, միակ համապարփակ աշխատությունն էր սովետական շրջանում մինչև 1960-ական թթ. գրված իտալական և եվրոպական Վերածնունդի գրականության նախակարապետ մեծ ֆլորենտացու կյանքի և ստեղծագործության մասին։ Ջիվելեգովի ընտիր երկերի թարգմանությունը և հրատարակությունը մեզ մոտ՝ կլիներ մեր ժողովրդի հարգանքի տուրքը մեծանուն գիտնականի հիշատակին։

Ա. Կ. ՋԻՎԵԼԵԳՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Городская община в средние века, СПб., 1901.
Средневековые города в Западной Европе, СПб., 1902, 1903.
Торговля на Западе в средние века, СПб., 1904.
Армяне в России, М., 1906.
Начало Итальянского Возрождения, М., 1908, 1924.
История современной Германии, ч. I, СПб., 1908; ч. II, СПб., 1910.
Александр I и Наполеон, М., 1915.
Вольные города в Европе, М., 1919.
Крестьянские движения на Западе. Исторический очерк, М., 1920, 1922, 1923.
Армия Великой французской революции и ее вожди. Исторический очерк, М—Пг., 1923.
Очерки Итальянского Возрождения. Кастильоне-Аретино-Челлини, М., 1929.
Данте Алигьери, М., 1933, 1946.
Леонардо да Винчи, М., 1935, 1969.
Микеланджело, М., 1938, 1957.
История западноевропейского театра от возникновения до 1789 г. (в соавторстве с Г. Н. Бояджиевым), М.—Л., 1941.
Итальянская народная комедия, М., 1954, 1962.

---

7 Տե՛ս Հ. Զանազանյան, Մաերիմ գեմրեր, Երևան, 1965, էջ 58—66։

АЛЕКСЕЙ ДЖИВЕЛЕГОВ

(К 100-летию со дня рождения)

А. Н. ТАЯН

(Резюме)

Статья посвящена научной и педагогической деятельности известного советского ученого, крупнейшего специалиста по литературе европейского, в частности итальянского Возрождения, члена-корреспондента Академии наук Армянской ССР Алексея Карповича Дживелегова (Дживелегяна, 1875—1952). В ней дается также обзор наиболее важных научных грудов ученого.